Արձանագրություն N2

ՃԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/01ծածկագրով բժշկական նշանակության առարկաների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Ճամբարակ 19.10.2018թ.

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ

/Ճամբարակի ԱԿ/ՓԲԸ փոխտնօրեն՝ Կ. Ռլումյան

Հանձնաժողովի անդամներ

/հաշվապահ/ Լ. Խաչատրյան

/գանձապահ/ Ն. Մկրտչյան

/դեղագործ/ Ն. Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար Մ. Մուսայելյան

1.Տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի միջոցով

հայտերի բացման վայրի , օրվա և ժամի մասին

**1.1 Ընդունել ի գիտություն, որ << Ճամբարակի ԱԿ>>ՓԲԸ կարիքների համար բժշկական նշանակության առարկաների ձեռքբերման նպատակով ս.թ.սեպտեմբերի 26-ին էլեկտրոնային eauction.armeps.am համակարգում և gnumner.am կայքում հայտարարվել է և հրապարակվել է ՃԱԿ- ԷԱՃԱՊՁԲ-18/01 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ/Ընթացակարգ/:**

**1.2 Գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 04.10.2018թ., ժամը 11:00 /նախաաճուրդային շրջան/:**

**1.3 ՀՀ կառավարության 14 մայիսի 2017թվականի ''Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին'' թիվ 534-Ն որոշման / այսուհետ կարգ/ 13-րդ կետի համաձայն eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը՝08.10.2018թ. ժամը 11:00:**

---

**Որոշումը ընդունվել է ՝կողմ 4, դեմ 0**

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները, տվյալներ՝ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին:**

2.1 հայտեր ներկայացրած մասնակիցների անունները, տվյալները՝

| | | |
|---|---|---|
| 1 | Լեոն և Լամարա ՍՊԸ | *Ք. Երևան Դավթաշեն 1 թ. 21շ/54բն ՀՎՀՀ 00021334* |
| 2 | Խաչպար ՍՊԸ | *Ք. Երևան Միքայելյան 76/2 ՀՎՀՀ 00071045* |
| 3 | Դեզսերվիս ՍՊԸ | *Ք. Երևան քանաքեռ-Զեյթուն , Ներսիսյան 7 ՀՎՀՀ 00900268* |
| 4 | Ֆարմեգուս ՍՊԸ | ք. Երևան, Մամիկոնյանց 3շ, բն.41, հեռ. 096-44-59- 29 00108127 |

**2.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին;**

Հայտ ներկայացրած մասնակիցները հայտում ներառված , գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված Դիմում-հայտարարությունը /հավելված 1/Լևոն և Լամարա ՍՊԸ կողմից, կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, իսկ Խաչպար ՍՊԸ-ն մրցույթի ծածկագիրը սխալ էր ներկայացրել, ինչի պատճառով ուղարկել ենք դիմում-հայտարարության շտկման ծանուցում, մասնակցի կողմից շտկվել է և հայտը գնահատվել է բավարար:

**Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0**

**2.3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների վերաբերյալ.**
Հարցում եղել է՝ կապված չափման միավորի և չափաբաժնի անվանման հետ: Ներկայացվել է համապատասխան պարզաբանում:

**Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0**

2.4 Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների վերաբերյալ.
Բողոքները բացակայում են

**Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0**

2.5 Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի վերաբերյալ:
Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

**Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0**

3 <u>Մերժված հայտերի մասին՝</u>

3.1Ղեկավարվելով կարգի 19-րդ կետի 1-ին ենթակետով ՝ , ինչպես նաև Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի ՝ հանձնաժողովը որոշեց թիվ 1-10և 13 չափաբաժինների մասով Դեզսերվիս ՍՊԸ-ի. Խաչպար ՍՊԸ-ի Ֆարմեգուս ՍՊԸ-ի հայտերը համարել մերժված , քանի որ աճուրդն ամփոփելու պահի դրությամբ գնաառաջարկները գերազանցել են ապրանքների նախահաշվային գները:

**Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0**

**4.ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին:**

**Ընդունել ի գիտություն, որ**

- 4.1 ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի / այսուհետ 'կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե / այսուհետ՝ կոմիտե/ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է առաջարկվող ամբողջական նկարագիրը՝ իրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, Դեմ-0*

4.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ իրավերով նախատեսված փաստաթղթերը:

## 5. Հանձնաժողովի կայացրած որոշումներ

5.1 Հանձնաժողովը որոշեց՝
Թիվ 10,11,12,14,15,16 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել '' Լևոն և Լամարա ''ՍՊԸ-ին

## 6. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշումը ընդունելու մասին

Հիմք ընդունելով ''գնումների մասին'' ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 5-րդ կետով ընդունված որոշումը , պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակիցներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0*

**Հանձնաժողովի նախագահ ՝** **Կ. Ուլումյան**

**Անդամներ՝** **Ն. Մկրտչյան**

**Լ. Խաչատրյան**

**Ն. Մարտիրոսյան**

**Հանձնաժողովի քարտուղար ՝** **Մ. Մուսայելյան**